ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

15 հունվարի 2014թ. թիվ 45-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 143-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի՝ հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի <<Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 143-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները.

1) Հրամանի 1-ին կետից հետո լրացնել 1.1, 1.2 և 1.3 կետերը՝ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1. Սույն հրամանի հավելվածի 21-67-րդ, 71-րդ և 92-րդ գլուխների պահանջները կատարել Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով, բացառությամբ այն աշխատանքների, որոնք պարունակում են պետական գաղտնիք պարունակող գաղտնի տեղեկատվություն:

1.2. Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կատարման նպատակով ներքին աուդիտի աշխատանքների գնահատումների համար հիմք ընդունել միայն Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով իրականացված աշխատանքները, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների աուդիտի աշխատանքների:

ՖՆ 000381

1.3. Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի օգտագործողի ուղեցույցը, ինչպես նաև դրանում փոփոխությունները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում:>>

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Դ. Սարգսյան